Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Հայաստանի Հանրապետության Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին»

Չեզոք Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, բացառությամբ *«Կարծիքի ձևափոխման հիմքեր»* պարագրաֆում նշված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Գոյություն ունեն հայտանիշներ, որ փոխհատուցելի ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) փոխհատուցման գումարը կարող է փոքր լինել վերջինիս 401,453 հազար դրամ և 373,771 հազար դրամ գումարով հաշվեկշռային արժեքներից՝ համապատասխանաբար 2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Պատճառն այն է, որ չի ակնկալվում, որ Ընկերության գործունեության արդյունքում կգոյանա բավարար վճարվելիք ԱԱՀ՝ փոխհատուցելի ԱԱՀ-ի հետ հաշվանցելու համար, և չկան նշված գումարները փոխհատուցելու այլ մեխանիզմներ: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 36 «*Ակտիվների արժեզրկում*» համաձայն՝ նման հայտանիշների առկայության դեպքում ղեկավարությունը պետք է գնահատի փոխհատուցվող գումարները: Նման գնահատում չի իրականացվել: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների հետ նշված անհամապատասխանության ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա չի որոշվել:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Grant Thornton

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Բացի այդ, մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախությանը վերաբերող համապատասխան վարքագծի պահանջները, և որում հաղորդում ենք մեր բոլոր կապակցվածությունները և այլ հարցեր, որոնք կարող են խելամտորեն ազդեցություն ունենալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, համապատասխան պաշտպանվածությունը նման ազդեցությունից:

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

2017թ. մարտի 15

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3,184,494	3,467,420
Ոչ նյութական ակտիվներ		4,423	5,293
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	5	401,453	373,771
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		5,701	-
		3,596,071	3,846,484
Ընթացիկ ակտիվներ			
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	6	238,028	-
Պաշարներ		3,757	4,141
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	14,978	2,099
Ընթացիկ հարկային ակտիվներ		2,671	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	284	37,541
		259,718	43,781
Ընդամենը ակտիվներ		3,855,789	3,890,265
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	9		
Բաժնետիրական կապիտալ		391,915	293,283
Չգրանցված կապիտալ		1,074,593	-
Վերագնահատման պահուստ		1,052,052	1,099,346
Ընդհանուր պահուստ		63,702	60,102
Չբաշխված շահույթ		768,755	927,116
		3,351,017	2,379,847
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	75,102	37,777
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	218,162	261,344
Ակտիվներին վերաբերող շնորհ	12	128,967	1,121,474
		422,231	1,420,595
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	10	229	20,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	82,312	62,808
Ընթացիկ հարկային պարտավորություններ		-	7,015
		82,541	89,823
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,855,789	3,890,265

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. մարտի 15-ին:

Արման Սաղաթելյան
Գործադիր տնօրեն

Սոֆյա Մալիյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գովազդից հասույթ		36,380	20,093
Դրամաշնորհներից եկամուտ	14	807,418	860,561
Վարձակալությունից եկամուտ		25,241	15,895
Այլ եկամուտ		4,532	5,525
Հեռարձակման ծախսեր		(134,081)	(132,525)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(516,972)	(478,430)
Ռադիոհաղորդումների պատրաստում		(49,453)	(49,328)
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում		(289,485)	(109,332)
Այլ ծախսեր	15	(72,210)	(64,544)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		(188,630)	67,915
Ֆինանսական եկամուտ	16	730	602
Ֆինանսական ծախսեր	16	(12,406)	(8,711)
Այլ ֆինանսական արդյունքներ	17	16	(8)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(200,290)	59,798
Շահութահարկի գծով փոխհատուցում	18	35,668	12,909
Տարվա շահույթ/(վնաս)		(164,622)	72,707
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(164,622)	72,707

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Չգրանց-ված կապիտալ	Վերագնա-հատման պահուստ	Ընդհա-նուր պահուստ	Կուտակ-ված շահույթ	Ընդամենը
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	293,283	-	1,163,908	60,102	789,847	2,307,140
Տարվա շահույթ	-	-	-	-	72,707	72,707
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	72,707	72,707
Փոխանցում չբաշխված շահույթ	-	-	(64,562)	-	64,562	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	293,283	-	1,099,346	60,102	927,116	2,379,847
Տարվա վնաս	-	-	-	-	(164,622)	(164,622)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(164,622)	(164,622)
Շահաբաժիններ	-	-	-	-	(37,407)	(37,407)
Բաժնետիրական կապիտալի համալրում (տես՝ ծանոթագրություն 9.1)	98,632	1,074,593	-	-	(26)	1,173,199
Գործարքներ սեփականատերերի հետ	98,632	1,074,593	-	-	(37,433)	1,135,792
Փոխանցում չբաշխված շահույթ	-	-	(47,294)	-	47,294	-
Պահուստային կապիտալի համալրում	-	-	-	3,600	(3,600)	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	391,915	1,074,593	1,052,052	63,702	768,755	3,351,017

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	(164,622)	72,707
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	93,659	109,332
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(735)	-
Հողի արժեզրկումից կորուստ	138,822	-
Վաճառքի համար պահվող ակտիվների արժեզրկումից կորուստ	57,004	-
Տոկոսային ծախս	12,406	8,711
Ֆինանսական եկամուտ	(730)	(602)
Շահութահարկի գծով փոխհատուցում	(35,668)	(12,909)
Դրամաշնորհներից եկամուտ	(807,418)	(860,561)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(16)	8
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(707,298)	(683,314)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(40,572)	(26,224)
Պաշարների փոփոխություն	384	(2,126)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	19,528	(3,653)
Շնորհների ստացում	855,303	828,553
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	127,345	113,236
Վճարված տոկոսներ	(2,297)	(4,706)
Վճարված շահութահարկ	(17,200)	(6,401)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	107,848	102,129

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(150,874)	(16,708)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	824	-
Ստացված տոկոսային եկամուտ	730	602
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(149,320)	(16,106)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	62,445	-
Վարկերի և փոխառությունների մարում	(55,000)	(50,000)
Վճարված շահաբաժիններ	(3,233)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	4,212	(50,000)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(37,260)	36,023
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	3	(1)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	37,541	1,519
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	284	37,541

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: